

ՉԻՆԱՍՏԱՆ

Մշակույթի, կրթության, առողջապահության, սպորտի և տուրիզմի բնագավառներում համագործակցության համաձայնագիր է ստորագրվել 1992թ. հունիսի 4-ին, Պեկինում:

Ստորագրող կողմերն են ՀՀ կառավարությունը և ՉԺՀ կառավարությունը:

Առողջապահության և բժշկագիտության բնագավառում համագործակցության համաձայնագիր է ստորագրվել 1993թ. օգոստոսի 26-ին, Երևանում: Ստորագրող կողմերն են ՀՀ առողջապահության նախարարությունը և ՉԺՀ առողջապահության նախարարությունը:

Համագործակցության շրջանակներն են.

- գիտահետազոտական համատեղ աշխատանքներ առողջապահության, բժշկագիտության և դեղագիտության ոլորտներում,
- ուղղակի համագործակցություն երկու երկրների բժշկական և դեղագործական հաստատությունների միջև,
- տեղեկությունների, փորձի, մասնագետների փոխանակություններ, մասնակցություն միմյանց գիտական միջոցառումներին: